## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԵԵԿԿ-ԵՄԱՊՁԲ-26/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

30 հունիսի 2026թ.

2026 թվականի հունիսի 30-ին ժամը 11:00-ին ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում տեղի ունեցավ մշտադիտարկման ենթակառուցվածքի ձեռքբերման ԵԵԿԿ-ԵՄԱՊՁԲ-26/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Ավանեսյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի փոխտնօրենը, |
| Տ. Արզումանյանը՝ | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատու, |
| Ա. Ղուկասյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի ՏՏ ենթակառուցվածքի սպասարկման բաժնի պետը, |
| Ջ. Թովմասյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի հաշվապահը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Ավանեսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղարը՝ «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են չորս անդամ, բացակայում էր «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչատնտեսական բաժնի պետը Ա. Դավթյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում հրավիրված բանակցությունների վերաբերյալ:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացակարգի շրջանակում, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, ինչպես նաև գնման առարկայի բնութագրերը ճշգրիտ (օբյեկտիվ) և օրենքի պահանջներին համապատասխան սահմանելու նպատակով, 2026 թվականի հունիսի 30-ին ժամը 11:00-ին հրավիրված բանակցություններին մասնակցում էին նախարարակավորված և բանակցություններին հրավիրված հետևյալ մասնակիցների ներկայացուցիչները.

- «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ կոնսորցիումի կողմից լիազորված ներկայացուցիչներ՝ Ա. Թովմասյանը և Բ. Աթայանը,
- «Իմպեքս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Շախնազարյանը,
- «ԱյԱյ Սեք» ՍՊԸ և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ կոնսորցիումի կողմից՝ «ԱյԱյ Սեք» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ավագյանը, ինչպես նաև վերջինիս կողմից լիազորված ներկայացուցիչներ՝ Մ. Մարուքյանը և Հ. Դանիելյանը,
- «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ՝ Ա. Նիկողոսյանը, Լ. Ազատյանը:

Բանակցությունների մեկնարկին Հանձնաժողովը բանակցություններին ներկա մասնակիցներին ներկայացրեց ձեռքբերվող համակարգին ներկայացվող հիմնական պահանջներն ու դրույթները: Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից բարձրացվեցին մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրվեցին անհրաժեշտ պարզաբանումներ:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովը և բանակցություններին ներկա մասնակիցները (կամ նրանց լիազորված ներկայացուցիչները) համատեղ արձանագրեցին, որ ներկայացված պահանջների և հիմնական դրույթների հիման վրա յուրաքանչյուր մասնակից կմշակի իր կողմից առաջարկվող լուծումները և Հանձնաժողովի հաջորդ նիստում, բանակցությունների շարունակության շրջանակում, կներկայացնի իր առաջարկը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն բանակցությունների ընթացքում ներկայացված տեղեկատվությունը և տեղի ունեցած քննարկման արդյունքները:
2. Ավարտված համարել 2026 թվականի հունիսի 30-ին ժամը 11:00-ին հրավիրված բանակցությունների նիստը և բանակցությունները շարունակել Հանձնաժողովի հաջորդ նիստում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հնձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2026 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 11:00-ին, «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Ավանեսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Տ. Արզումանյան ____________

Ա. Ղուկասյան ____________

Ջ. Թովմասյան ____________

*Նախարարակավորված և բանակցություններին հրավիրված մասնակիցների ներկայացուցիչներ՝*

Ա. Թովմասյան ____________

Բ. Աթայան ____________

Մ. Շախնազարյան ____________

Ա. Ավագյան ____________

Հ. Դանիելյան ____________

Ա. Նիկողոսյան ____________

Լ. Ազատյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________